

1935

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 183

ԷԼԻԶԱ ՕԺԵՇԿՕ

Элиза Ожешко

ԵՆՍԻ ԱՐԿԱՇՔՆԵՐԸ

Проклятый Аси

Մ Ե Շ Ե Ե Ե Շ Զ Բ Ո Յ Յ

Домекін паркаст

Թարգմ. Պ. Պ.

перев. П. П.

ՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՈՒՆ

№ 9 ՀՐԱՏԱՐԱԿՈՒՆԺ Ա. ՊՕՂՈՍԵՆՆԻ ԳՈՒՄԱՐՈՎ № 9

2004

Թ Ի Փ Լ Ի Ս
Արագ. տպար. Մ. Մարտիրոսյանցի
Միքայելյան փողոց, № 81.
1900

891.855
0-30

891.85
0-30
1 կր.

1

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 183

ԵՂԻՉԱ ՕԺԵՇԿՕ


ԵԱՍԻ ԱՐԿԱԾՔՆԵՐԸ

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՈՅՑ

Թարգ. Պ. Պ.

ՄԱՆԱԿԱՆ ԳԱՆՈՒՄ

№ 8 ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Ա. ԳՕՂՈՍԵԱՆԻ ԳՈՒՄԱՐՈՎ № 8



Թ Ի Փ Լ Ի Մ
Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի
Միքայելեան փողոց, № 81.
1900

Թ Ի Փ Լ Ի Մ

1501

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

№ 188

ՊՐԻՆՏԻՆԻ ՊՐԵՍԱ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозв. Ценз. Тифлисъ, 16-го Мая 1900 года.



4858

41

ԵՐՍԻ ԱՐԿԱԾ ՔՆԵՐԸ



Մի ձմեռային մառախլապատ օր էր: Չիւնը սպիտակ սաւանի նման ծածկել էր Գրոզնո քաղաքի փողոցները: Բայց Եասին (լեհական անուն է) ինչ. նա սեղանից նոր վեր էր կացել ու ծափ տալով իր հայրիկի ու մայրիկի ձեռքերը պաշպշում: Եասի հետ սեղանակից էին իր հայրն ու մայրն էլ: Տաք սենեակ էր սեղանատունը. ճաշից նոր էին վեր կացել. սենեակում դարսոտած կանաչ ծաղիկներից՝ մարդ կկարծէր թէ ամառ էր. վանդակներում ղեղձանիկներն էին թռչկոտում ու ծլկում. դարակի վրայ՝ ճաշից մնացած կարկանդակն էր աչքի առաջին դրուած. դռան միւս կողմից՝ մանկանոցն էր երևում, որտեղ հազարաւոր խաղալիքներ էին շաղ անցած. թէ մարդ ես՝ զնա ու մէկ-մէկ համարիր. էնքան շատ էին: Այլ քեզ բախտաւոր երեխայ. մանաւանդ այսօր նրա ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Հարցրէք ինչո՞ւ: — Եասի մօրաքոյրն այսօր մի մանկական խնճոյք պիտի տար. այնտեղ, բացի մօտ ազգական երեխաներից՝ պիտի հրաւիրուած լինէին շատ

Ժանօթ ու անծանօթ մանուկներ, ամենքը պիտի լինէին զանազան հագուստներով զարդարուած, և ինչ ասել կուզէ, որ Եասը պիտի ունենար նոր հանգերձներ ու հէնց հիմի պիտի հագնուէր, որ տեսնէ վրան ինչպէս է գալիս, վայելում է իրան. իսկ իրիկնապահին՝ Եասն իրանց սպասուհու հետ գնալու էր մօրաբրոջ տունը, որտեղ իր հայրն ու մայրն էլ լինելու էին: Եասի սիրտն ուրախութիւնից թրթռում էր, երբոր սպասուհին հագցնում էր նորան նոր, կարճաճիտք, բարձրակրունկ, պայտած կօշիկներ, շուրջը կարմիր երիզներով կարուած սպիտակ վերնաշապիկ, որի վրայից ծածկուած ուսնոցն այնպէս փայլում էր, որ նայողի աչքերը խտտողում էին: Եասի ուրախութիւնը տասնապատիկ աւելացաւ՝ երբ տեսաւ պողպատի կոճակներով զարդարուած շքեղ կաշուէ գօտին ու թանգազին, բաց կապոյտ մորթով բոլորուած կարմիր գլխարկը: Էդ բոպէին աշխարհն Եասինն էր:

Մէկ էլ յանկարծ աղախինը կամաց ներս եկաւ մանկանոցը և յայտնեց, որ մի ալևոր է եկել ու ողորմութիւն է խնդրում: Այս լսելն ու Եասի ուրախութիւնը տրտմութեան փոխուելը մէկ է լինում: Նա մոռացաւ զարդարանք ու պանուճանք. ճշաց, դուրս պրծաւ սպասուհու ձեռքից և շտապով ներս խցկուեց մահճակալի տակ:

— Տէր իմ Աստուած, ախար մինչև երբ դու պիտի աղքատներից վախենաս. այ սիրելի Եաս, հերիք է, դուրս արի, «թախկենալուկի» հօ շես խաղում, — տխուր-տրտում կանչեց մայրը:

— Ա՛խ մայրիկ, ներս մի թողներ աղքատին. բո-

լորովին մի թողներ, անպատճառ նա ձեռք*) է, — մղկտում, թախանձում էր Եասը:

— Ի՛նչ կայ, ի՛նչ է պատահել, — ներս եկաւ և հարցրեց հայրը:

Մայրն ամեն բան պատմեց ամուսնուն: Նա յայտնեց, որ Եասի պառաւ դայեակ Մարիանան և նրա նախկին դաստիարակչուհի (բօննա) Սոփիան, երբ որ երեխան շարութիւն էր անում՝ երկիւղ տալու համար՝ սպառնում էին նորան տոպրակը կողքիցը կախ, սպիտակամօրուք, ալևոր ձեռքի անունով, իբր թէ ձեռքը վատ ու անհնազանդ երեխաներին բռնում, տոպրակի մէջն է կոխում ու տանում: Այն օրից այս օր է, մօր ասութեամբ, որ Եասը աղքատ մուրացկաններից վախում է:

Հայրը բարկացաւ և խիստ ձայնով հրամայեց սպասուհուն՝ աղքատին տուն թողնել, իսկ Եասին քաղցրութեամբ և սիրով պատուիրեց, որ իր ձեռքով տանի աղքատին ողորմութիւն տայ:

— Ո՛չ, հայրիկ, ո՛չ. ազաչում եմ, ազատիւր ինձ, — թախանձում էր երեխան. — սիրելի հայրիկ, ես չեմ կարող, չեմ դուրս գայ. նա անպատճառ տոպրակն ուսին ձեռք կլինի:

Ջահէլ դայեակը զլուխը մահճակալի տակ կոխեց ու կամաց փշփշաց. նայիր, Եաս, հայրիկդ լալիս է, հայրիկդ էնպէս նեղանում է, որ կհրանդանայ. չէ կարող տանել:

Դայեակի խօսքերը ներդործեցին բարեսիրտ մա-

*) Լեհաստանում «ձեռք» ասում են մուրացիկ ալևորներին:

նուկի վրայ. նա իսկոյն դուրս եկաւ մահճակալի տակից:

Հայրը մի արծաթէ դրամ տուեց Եասին և հրամայեց, որ իսկոյն գնայ խոհանոց ու իր ձեռքով տայ այնտեղ կանգնած մուրացկանին:

Եասի երկիւզն անտեղի չէր, նա շատ լաւ էր հասկացել: Մի լղար, բարձրահասակ, երկարամորուք ծերունի էր մուրացկանը, մեծ ու հաստ քաթանի տոպրակն ուսիցը կախ: Նա կռթնել էր երկար դաւազանի վրայ և կամաց օրհնութիւն էր տալիս: Այս բաներն այնպէս շփոթեցին Եասին, որ քիչ մնաց՝ նորից փախչում, մտնում էր մահճակալի տակ, եթէ դայեակը չբռնէր նրա ձեռքից ու քաղցր խօսքերով չհամոզէր ու սիրտ չտար:

Վախվախելով մօտ գնաց երեխան ծերունուն, և ձեռքը դողալով՝ փոզն ալևորին տուեց ու, հայդէ, շտապով վազեց, տուն ընկաւ մանկանոցը:

Մայրն ու հայրն իրանց կողմից սկսեցին հասկացնել Եասին. թէ իր արածը յիմարութիւն է և վատ բան է, թէ ամեն մի կարողութեան տէր մարդի սուրբ պարտականութիւնն է ոչ թէ խեղճերից վախենալ ու խրտնել, այլ խղճալ և ամեն կերպ աշխատել նորանց օգնելու:

Եասը ամենայն պատկառանքով լսում էր ծնողներին, բայց բոլորովին այլապէս էր մտածում: Նա երբ իր դայեակի հետ միայն մնաց՝ պարզ խոստովանուեց, որ ինքը չէ հասկանում, թէ ինչ է իր մեղքը:

— 2է որ ես ասում էի, թէ ձեռքն երկար ու սպիտակ մօրուք կունենայ և տոպրակը կողքիցը

կախ կլինի. տես՛, որ իմ խօսքս ուղիղ դուրս եկաւ, — ասում էր նա: — Ոչ ոք ինձ չէ կարող համոզել, թէ մուրացկանները դրա պէս սարսափելի և այլանդակ ձեռք չլինին, — ասաց Եասն իր դայեակին՝ երբ որ նրանք երկուսը միասին տանից դուրս եկան:

— Գիտէ՞ք ինչ, օրիորդ Պաուլինա. ես երբ կը մեծանամ ու ծառաներ կունենամ՝ սաստիկ հրաման կտամ, որ ոչ մի աղքատի տուն չթողնեն:

Դայեակին շատ դուր չեկան կարճամիտ երեխայի խօսքերը. նա ուզեցաւ հասկացնել Եասին, թէ նրա արածը լաւ բան չէ: Մէկ էլ յանկարծ Եասի աչքովն ընկաւ սափրիչի խանութի լուսամտումը ցոյց դրուած մի գեղեցիկ մեղրամոմէ խաղատիկին, գլուխը փառաւոր սանտրուած և մարգարտէ մանեակը վզիցը կախ:

Խաղատիկինը ներկայացնում էր մի պճնազարդ կին, որ ծանր-ծանր շուռ էր գալիս և ուռած, փքուած իր ուսազխններովը նայում էր շուրջը:

Բոպէական Եասը մոռացաւ բոլոր անցածները և դայեակի կռնից բռնեց ու քարշ տուեց լուսամտի մօտ:

Մոմէ գեղեցկուհուն բաւականաչափ մտիկ տուին նրանք ու առաջ գնացին: Հազիւ մի քանի քայլ էին նրանք արել՝ և ահա՛ նորից Եասի ուշքն ու միտքը գրաւեցին շաքարեղէնի խանութի պատուհանում ցոյց դրուած իրեղէնները: Եասն այստեղ ևս խնդրեց դայեակից, որ իրան թոյլ տայ այն բաներին նայելու: Մհ, ինչ հիանալի առարկաներ. առ քեզ քաղցրեղէնի պատկերազարդ արկղիկներ, շաքարէ դամբիւղներ, հնդկանուշից շինուած շօկո-

լառի շնիկներ, փոքրիկ-փոքրիկ, կարմրաթուշիկ, թևաւոր քերովբէներ: Երեխան նայելով չէր կշտանում... Այդ էլ թողին նրանք ու անց կացան: Մէկէլ փողոցումը մի գրավաճառանոց կար. լուսամտի վրայ շարուած էին փառակազմ գրքեր, իսկ գրքոյկներին մէջ տեղը մի զարմանալի մեքենայ էր դրուած: Մեքենան այսպէս էր կազմուած. պղնձեայ թելի վրայ ամրացրած էին գոյնզգոյն գնդակներ և պտտուում էին մի մեծ գնդի շուրջը: Դայեակը բացատրեց Եասին, թէ այդ մեքենան կոչուում է երկրացոյց գործիք (տէլլուրիում) և ցոյց է տալիս, թէ ինչպէս երկիրն ու մոլորակները դառնում են արեգակի շուրջը: Դայեակի պատմուածքովն այնպէս բորբոքուեց երեխայի հարցասիրութիւնը, որ նա հաստատապէս մտքումը զրեց խընդրել իր հօրից՝ իր համար մի այդպիսի մեքենայ գնել և պատմել իրան արևի, երկրի և մոլորակների մասին:

Եւ այսպէս՝ Եասն ու իր դայեակը տեղ-տեղ կանգնելով ու նոր-նոր առարկաների նայելով՝ քիչ քիչ մօտենում էին իրանց գնալու տեղին: Բայց Եասի մօրաքոյրն այնքան էլ մօտ չէր բնակուում. նրանք հազիւ թէ ճանապարհը կիսած կլինէին, որ երեկոյեան ժանգառքը սկսեց պատել:

Յանկարծ նորանց պատահեց մի ահագին բազմութիւն, որ բռնել էր փողոցի մէջտեղը: Խուժանն ազմուկ ու աղաղակ զրած ուղիղ նրանց դէմ էր գալիս: Մեր երկչոտ Եասի լեղին փորումը ջուր կտորուեց, բայց օր. Պաուլինան նրան հանգստացրեց. — Ինչից ես վախենում, — ասաց աղջիկն. — երևի ձեռ-

նածուի մէկը զանազան աչքակապութիւններ է անում կամ զազաններ է ցոյց տալիս, ու ամբոխը գնում է նրա քամակից:

— Աչքակապութիւն, զազաններ, — թռչկոտաց ու գոչեց Եասը. — գնանք, գնանք, սիրելի օրիորդ Պաուլինա. գնանք, մտիկ տանք, շնտ, էլ մի ուշանաք: Եւ Եասը, որքան կռնումը զօրութիւն կար՝ սկսեց քարշ տալ դայեակին:

— Տես, տես, ինչ սիրուն կապիկ է, — ծիծաղելով գոչեց դայեակը:

Ամբոխը գոռում-գոչումով շարունակ գնում էր զազաններ պար ածողի յետևից. ձեռնածուն փողոցային երգեհոնը (շարմանկա) կուզիկ մէջքին էր առել ու երկու կարգ մանր խաղատիկիները երաժշտական գործիքի վրայ շարել, իսկ ձեռքին քաշում էր մի փոքրիկ կապիկի պարանը:

Չատ ծիծաղաշարժ էր կապիկը. կարմիր արխալուղի ներքի կողմից երևում էր նրա բրդոտ պոչը, իսկ վերի կողմից դուրս էր պրծել նրա գլուխն ու շագանակագոյն դունչը: Դէմքի տարօրինակ և յարաշարժ գծագրութեամբը՝ փոքրիկ կենդանին մի տեսակ մարդու նմանութիւն էր տալիս: Ճարպիկ, չարաճճի անասունն ուռած ու փքուած՝ անդադար թռիչքներ էր անում, ըոպէ առ ըոպէ կամ տիրոջ ուսերն էր թռչում կամ թէ գետնին, գլխի վրայ պտոյտներ էր անում. հէնց կարծես թէ պար էր գալիս: Այդ ժամանակ նա այնպէս ծամածուում էր իր դէմքը, որ նայողները խելագարի պէս կշկչում, հռհռում էին: Մէկ տեսնում էիր, որ կապիկը գունչ ու մուլթը ժողովեց ու ճակատը կնճռակալեցրեց.

մէկ՝ շրթունքներն շտապ-շտապ իրար տուեց ու առաջի ձեռքերում բռնած խնձորը դրեց բերանն ու էնպէս, յական թօթափել, ծամծամեց ու կուլ տուեց, որ կարծես վախենում էր, թէ ձեռքիցը կխլէին. իսկ նրա սև ուլունքի պէս փայլուն աչքերը շարունակ չորս կողմ էին դառնում:

Եսսը ծիծաղելով ու հռհռալով՝ սկսեց իր դայեակի հետ մէջ խցկուել. նրա հոգը չէր, թէ ամեն կողմից ճնշող բազմութեան միջից հարուածներ էին կարկտի պէս իր վրայ իջնում. նրա միակ ցանկութիւնն այն էր, որ կարողանար կապիկին ձեռք քսել, կամ գոնէ մօտիկից տեսնել:

Յանկարծ՝ ճխլտոցի ժամանակ, մի աղաղակ բարձրացաւ, սովորական մի երևոյթ. ամբոխի մէջ մի շարժում ընկաւ. մի սարի պէս, մէջքը պինդ, կոնները հաստ երիտասարդ բազմութիւնը յետ պատուելով՝ առաջ էր գալիս ու իր յետևից անգին ամբոխ ծովի ալիքի պէս իրար գիպանելով՝ քարշ տալիս: Մի այդպիսի ճնշումի ժամանակ՝ Եսսի ձեռքը բաց ընկաւ դայեակի ձեռքից, և մինչև որ նրանցից մէկը կամ միւսը ուշքի եկան՝ ամբոխը նրանց իրարից բաժնեց ու հեռացրեց:

Եսսը չկարողացաւ էլ այդ բունը նկատել, որովհետև հէնց նոյն ընթացքին՝ երգեհոնը վալս պարի եղանակն ածեց, և կափարիչի վրայ մինչև այդ ժամանակն անշարժ շարուած խաղատիկիներն սկսեցին գոյգ-գոյգ պտոյտներ անել:

Քոյնզգոյն զգեստներով վարդարուած խաղատիկիները շատ սիրուն պարում էին, իսկ կապիկը թռաւ բարձրացաւ, տիրոջ գլխին կանդնեց ու ձեռքն

արխալուղի գրպանը տարաւ, հանեց միջից ընկուզի դատարկ կճեպներ ու ատամները հանդիսականներին ցոյց տալով՝ սկսեց շաղ տալ թափառաչըջիկները գլխին:

Կճեպներից մէկը քիչ մնաց դիպչում էր Եսսին. երեխան երկիւղից մի ընթացք աչքերը կուշ ածեց, բայց մինչև որ նա նորից աչքերը բաց կանէր՝ բազմութիւնն այնպէս յորձանք տալով հեռացրեց իրարից կապիկին ու իր տիրոջը, որ ինքն էլ ոչինչ չկարողացաւ տեսնել. լսում էր միայն հեռուից երգեհոնի ձայնը. այն էլ կտրուեց ու հեռացաւ: Այդտեղ միայն մեր Եսսը զգաց, որ խուժանի հարուածներից իր ուսերը, կողքերն ու կոնները սաստիկ ցաւում էին:

Երկար ժամանակ Եսսն աչքերով որոնում էր օրիորդ Պաուլինային: Խեղճն ուզեց տեղիցը շարժուել, բայց չկարողացաւ. ամբոխն ամեն կողմից իրան պինդ սեղմել էր: Երբեմն երբեմն նորան թուում էր, թէ իր ոտները գետնից կտրուել էին և ոչ թէ ինքն էր ման գալիս, այլ իրան տանում էր խուժանի յորձանքը:

Մի անգամ Եսսը քիչ մնաց վայր էր ընկնում, և եթէ չզլորուեց՝ պատճառն այն էր, որ ձեռքով պինդ բռնեց իր առջևից գնացող մի պարոնի բաճկոնի փէշից: Մի այլ անգամ նա կախ ընկաւ մնաց մի հաստ ու տուռը կնոջ գլխի փաթաթանից:

Երեխան չէր իմանում, թէ ինքն այդ ընթացքին տեղ է գտնուում. չի էլ կարողացաւ հասկանալ, թէ ինչպէս եղաւ, որ ամբոխի հրելուց՝ ինքը մի քանի ձախ ու ծուռ փողոցներէ ել ու մուտ արել

ու վերջը ցած իջնելով՝ ընկել է մի բաց տեղ, ուր
որ բազմութիւնը կարողացել է ազատ շարժուել:
Մի փոքրիկ հրապարակ էր այն, շրջապատուած
ցած ու մանր տներով: Հրապարակը սալայատա-
կած չէր: Խուժանը բաժին բաժին էր եղել այդտեղ,
խումբ-խումբ իրարից հեռացել ու ցաք ու ցրիւ
ընկել, քաշուել: Աչքերը շատ ման ածեց Եասը,
բայց չկարողացաւ իմանալ, թէ ո՛ր անհետացան
կապիկն ու իր տէրը:

Հրապարակը դատարկուեց, և միայն մեր Եասը
մնաց մէն միայնակ, մէջտեղը կանգնած:

Հուրջը բոլորովին ամայութիւն էր. միայն չորս
բոլորքի մանր խրճիթների լուսամուտներից, գիշե-
րային թանձր մթութեան մէջ, ազօտ ցոլում էր
ճրագների կարմրագոյն խաւար լոյսը:

Գետինը ձիւնով ծածկուել էր. տեղ-տեղ ձիւնի
մէջ սևին էին տալիս լճակներում սառած ջրերը:

Ա՛հ ու դողով շուրջը նայեց Եասը, քիչ-քիչ ուշք
ու միտքը ժողովեց և սկսեց բարձր ձայնով կան-
չել իր դայեակին:

Սկզբումն անհամբեր ձայնով, վերջը՝ աղիողորմ
արտասուներով սկսեց կրկին ու կրկին գոչել ու կան-
չել: Բայց և ոչ մի պատասխան:

Ա՛հ ու սարսափը պատեց Եասին, միանաւանդ թէ
կրկնապատկուեց՝ երբ նկատեց, որ հրապարակի
ծայրում մի քանի ստուերներ շարունակ շարժոււմ
էին. բայց մթի մէջ հնարաւորութիւն չկար իմա-
նալու, թէ ի՞նչ էին այն ստուերները. իսկ մօտ գնա-
լը վախենում էր:

Գեռ մանկութեան ժամանակից՝ Եասը ստուե-

րից շատ վախենում էր, և եթէ պատահում էր, որ
յանկարծ պատի վրայ տեսնում էր իր սեփական
ստուերը՝ երկիւղից սկսում էր ճշալ:

Հետզհետէ նրա երկիւղը դադար էր առել, բայց
այդ ընդմիջումն՝ նա նորից գգաց նախկին երկիւղը:
Նա լաւ հասկանում էր, որ հարկաւոր էր կամ փախ-
չել կամ դայեակին որոնել, բայց հագիւ ուզում էր
քայլ անել՝ և ահա դիմացի տանից կամ դռնակի
միջից մի նոր ստուեր էր նշմարւում: Երևում էր
ստուերն ու ձեռաց անհետանում: Գարձեալ նոր
ստուեր. մէկը, երկուսը, երեքը. կրկնում էին ամեն
մէկը մի քանի անգամ և ծայրը չէր կտրւում:

Գուցէ դեռ երկար միջոց կանգնած մնար Եա-
սը մութն ու դատարկ հրապարակումը և չվստա-
հանար քայլ անել՝ եթէ ստուերներից մէկը շսկսէր
իրան մօտենալ:

Այս անգամ երեխան նկատեց, որ աչ ու ձախից
նոր-նոր ստուերներ են երևում, կարծես թէ եր-
կու ահագին գլխարկների միջից էին դուրս գալիս
այդ ստուերները, կամ աւելի լաւն ասենք՝ երկու
լայնաբերան պատկերից:

ձիչ արձակեց Եասն ու որքան ոյժ ունէր՝ վա-
զեց դէպի հրապարակի ամենածայրը, որտեղ գրտ-
նուած տան պատի տակ սարսափելի մթութիւն էր
տիրում:

Հագիւ թէ ուշք ու միտքը ամփոփել կամեցաւ
Եասը՝ մէկ էլ այն տեսաւ, որ այդ սարսափելի
ստուերն իր հետ եղած առարկաներով միասին՝ ոտն
է եղել ու մօտենում է ճիշտ այն տեղին, ուր որ
ինքն ուզում էր թագչել և նրանից ազատուել: Եա-

սի ատամներն երկիւղից սկսեցին իրար առնել: Բանից ինչ դուրս եկաւ, որ ինչ ստուեր, ինչ բան. մուշտակը հագին մի մարդ է եղել և ուսին ունեցել է փայտի ծայրերից կախուած երկու դոյլ (վեղոր):

Այդ ժամանակ միայն Եասը հասկացաւ, որ ինքը զուր է միջոց կորցնում. հարկաւոր էր կամ իմանալ, թէ ինչ եղաւ դայեակը, և կամ տուն դառնալու ճանապարհը որոնել:

Այս դիտաւորութիւնով՝ Եասը սկսեց շտապ քայլերով առաջ գնալ, բայց թէ ուր՝ ինքն էլ չէր իմանում:

Հրապարակի միւս կողմում՝ Եասի առաջ երկու փողոց բացուեց զանազան ուղղութեամբ: Երեխան շփոթուեց մնաց. չգիտէր, թէ ուր կողմը թեքուի: Մթնումը անձանօթ փողոցներն այնքան իրար նման են, որ մարդ կարծում է, թէ բոլորն էլ իրան ծանօթ են: Այդպէս էլ Եասին թուաց. նա երբ խոր նայեց՝ կարծեց թէ ինքը մի վախտ այս փողոցներումն եղած է: Մտածեց, մտածեց ու աջ բռնեց, գնաց: Մթութիւն. նեղ փողոցներ. կարծես թէ երկու կողմի շէնքերը ոչ թէ տներ, այլ մի մի հին ու ցած խրճիթներ էին: Եասին թուաց, իբր թէ ինքն իր հօր ու մօր հետ այստեղից անց է կացել և հայրը, որպէս թէ, ասած է եղել մօրը, թէ «այստեղ բնակուում են միմիայն խեղճ մարդիկը»: Հետեւաբար այստեղ մուրացկաններ են բնակուում. — ծագեց Եասի գլխում այս միտքը: «Չեաղիքը», կարծես փշփշաց մէկը Եասի ականջին:

Տէր իմ Աստուած... մութ գիշեր, մէն միայնակ, առանց դայեակի, այն էլ նայն փողոցում, ուր բո-

լոր «ձեաղերն» են բնակուում. ինչ կլինի իր դրութիւնը, եթէ ձեաղերն իրան տեսնեն: Յանկարծ եթէ բոլոր տների դռներն ու պատուհանները յետ բացուին, ու այդ սարսափելի «ձեաղերն» աչքերը տնկեն և իրան մտիկ տան:

Երեխային սարսափը տիրեց. նա էլ ոչինչ չմտածեց. որքան ոտքերում ոյժ և կարողութիւն կար՝ փախիր որ կփախչիս այս շարաղէտ տեղից: Փախս տուեց Եասը. աննկատելի կերպով ընկաւ երկրորդ փողոցն և տեղն ու տեղը մնաց փողոցի ծանցումը մխուած: Մի բարձր, ամենաբարձրահասակ էակ կանգնել էր նրա առաջին՝ թեքը լայն բաց արած և շարժում էր իր ալեղարդ, թաւամազ գլուխը: Առակաների մէջ պատմուած մի ալջ էր այդ հսկան:

Հիմի որ մեր Եասը բոլորովին կորած է. ուր գնար, ուրտեղ թագ կենար:

Նրա բախտից՝ հէնց այդ միջոցին մի մարդ, վառ լապտերը ձեռքին՝ անցնում էր, և Եասը ճրագի լուսով տեսաւ, որ իր առջևը կանգնածը մի ծառ էր, որի փռուած ճիւղերը նա ձեռքերի տեղ էր ընդունել, իսկ ձիւնով ծածկուած կատարը՝ գլուխ:

Ուրեմն զուր էր երկիւղը և բոլորը դատարկ բաներ էին: Այս ենթագրութիւնը քաջալիբեց Եասին, և նա, վստահ ու համարձակ՝ սկսեց քայլերն առաջ տանել: Բայց հիմա էլ մի ուրիշ անհանգստութիւն է մէջ գալիս. — ինչպէս պիտի գտնէ նա իրանց տան ճանապարհը: Զատ պարզ է, որ պէտք էր գնալ լայն փողոցներով, որտեղ անցուղարձ անողներն իրան ճանապարհ ցոյց կտային: Բայց ինքն էլ չգիտէր, թէ ուր կողմով պիտի գնար: Այսքանը լաւ հաս-

կացաւ Եասը, որ ինքը մեծ փողոցներից հեռու է. այստեղ ոչ մի կառքի ձայն չէ լսուում:

Չուրջը մեռեալ լուսթիւն էր. միայն քամին էր ազատ համարձակ շշոււմ ու փշոււմ. իսկ քաղաքի կենդրոնումն այդպիսի քամիներին արգելք կլինէին բարձր տների պատերը և կպաշտպանէին ցրտից անց ու դարձողներին: Այժմ, այստեղ, քամու ձեռքից Եասը մրսում էր: Բացի քամուց՝ յոգնածութիւնից՝ նրա ճռները կոտրատուում էին. իսկ կռներն ու ուտերը շատ ճնշուելուց խիստ ցաւում էին: Այդքանը չէր. դեռ մի ուրիշ անբախտութիւն էլ կար. սատանական՝ Եասի միտքն եկաւ, թէ հիմա իր մօրաքրոջ տանը խնձոյքն սկսուած կլինի. հիմի բոլոր երեսաները ժողովուել են տաք ու լուսաւոր սենեակներում, հիմի նրանց միւրգ ու զանազան քաղցրեղէններ են բաժանում: Ո՛վ գիտէ, կարելի է պարն էլ արդէն սկսուել է:

Վերոգրեալ յիշողութիւններից՝ Եասի սիրտը կտոր-կտոր էր լինում. նա կանգնեց, ուսը տուեց մի տան պատի, աչքերը ձեռքերով ծածկեց ու աղի աղի լաց եղաւ: Կուշտ ու կուռ արտասունք թափելուց յետոյ՝ նա աչքերը բաց արեց և ոչինչ չտեսաւ: Մութը բոլորովին տիրել էր: Եասը սարսափահար եղաւ: Նա աչքերը վեր բարձրացրեց. — երկնքում և ո՛չ մի աստղի նշոյլ. սկսեց լսողութիւնը լարել. — ո՛չ մի ձայն, ամենայն ինչ լուռ էր. միայն ինչ-որ մի հեռացող կառքի ձայն լսուեց ու նորից լուսթիւնը տիրեց:

Բայց անս վերեից ինչ-որ սառն ու թաց բան կպաւ Եասի երեսին. մէկ էլ, մէկ էլ: Չիւն է եղած:

Սկզբումը մէկ-մէկ փաթիլ էր ցած ընկնում, բայց քանի գնաց՝ ձիւնը սաստկացաւ, աչք ու երես ծածկեց և ամբողջ փողոցումը բրդոտ գորգի նման փրուեց: Մութն ականակիր էր. ամեն քայլափոխում Եասը սահում, սայթաքում էր ու գլորում մի փոս կամ մի առու, և կամ յոգնածութիւնից վայր էր ընկնում ձիւնի վրայ: Ճարն ինչ: Ցուրտն ու միայնութեան երկիւղը ստիպեցին Եասին բոլոր ոյժը հաւաքել, արհամարհել ամեն դաղբածութիւն ու առաջ գնալ: Բայց ախար ո՞ւր գնար խեղճ երեսան, ինքն էլ չէր իմանում. մառախլապատ ձիւնի միջից շուրջը ոչինչ չէր երևում. և նա, բախտի բերմունքին ապաւինած՝ քայլեր էր անում. ո՞վ գիտէ, կարելի է Աստուած տալիս է, մի տեղ դուրս է գալիս:

Յանկարծ Եասի ձեռքը մի բանի կպաւ. նա կարծեց, թէ ծառ էր. վերջը պարզուեց, որ մի սիւն էր այն: Բայց այժքեզ հրաչք: Եասը կամեցաւ գլուխը դէմ տալ սիւնին, որ գոնէ փոքր ինչ հանգստանայ, մէկ էլ նա նկատեց, որ սիւնը սաստիկ դողում է, կարծես ցուրտը սիւնին էլ մրսացրել էր:

Եասն ականջը դէմ տուեց սիւնին, և ան քեզ տրաքոց. սիւնը բզզում է, կարծես թէ ներսի կողմը մեղուններ են բուն դրել, կամ թէ մի աներևոյթ ինքնայեռ սիւնի մէջ եռում եփ է գալիս:

Սկզբումն այդ խիստ շփոթեց Եասին, բայց վերջը նա մտաբերեց, որ քաղաքում զբօսնելու ժամանակ՝ հայրն իրան տարել է այդպիսի սիւների մօտ և ստիպել է ականջ դնել. և իրան, այդպիսի սիւների մէջ էլ նա բզզոց լսել էր: Հայրն իրան ասել էր, թէ հեռագրասիւններ են նրանք: Ըստ լաւ. բայց



տներն ու փողոցներն ուր են... Այդ ժամանակ մի-
այն Եասը գլխի ընկաւ, որ երևի ինքը քաղաքից
դուրս է և մեծ ճանապարհի վրայ:

Հիմա ինչ անէր, յետ գնար. բայց ախար ինքը
սաստիկ յողնած էր և ոտքերը խիստ ցաւում էին:
Մէկ էլ ինչպէս իմանար, թէ որ կողմից յետ դառ-
նայ. երեք քայլի վրայ ոչինչ չէր երևում:

Սկսեց մղկտալով լալ ու ողբալ Եասը. նա գրկել
էր սիւնը և գոռում էր. — մայրիկ, մայրիկ, սիրելի
մայրիկ:

Յանկարծ նա ձայնը կտրեց, աչքը մի կողմի
վրայ տնկեց ու հեռուն նայեց: Նրա ուշադրութիւ-
նը գրաւել էր մի փոքրիկ կայծ, որ փայլում էր
մթութեան մէջ: Քիչ-քիչ, կայծի մէկն երկու և եր-
կուսն երեք են դառնում: Չէ, այս ոչ թէ կայծ է,
այլ ուղղակի կրակ է և այն, ըստ երևոյթին, շատ
մօտիկ: Կրակը մէկ բոց էր արձակում մթնումը,
մէկ իջնում, հէնց կարծես՝ աչքով անելիս լինէր:
Ուրեմն այս մօտիկ տեղը բնակութիւն կայ և
զուցէ այնտեղ մի բարեհոգի մարդ գտնուի, որ
իրան տանի, տուն հասցնէ:

Ուրախութիւնից Եասի ոտն ու ձեռն ոյժ առան.
Նա սրտապնդուեց և առաջ գնաց դէպի կրակը,
միայն մէկ-մէկ կանգնում էր հեռագրական սիւնե-
րի մօտ և հանգստանում: Հիմա այլևս սիւների բըզ-
զոցը նրան ոչ թէ չեն վախացնում, այլ մինչև-իսկ
զուարճութիւն են պատճառում, քանի որ նա յոյս
ունէր, որ մարդկանց պիտի հանդիպի: Չատ չըջա-
չեց, Եասը տեսաւ լոյսն երեցած տեղը: Կայծս որն
է. ահադին բոց էր բարձրանում:

Հասարակ, տախտակեայ, առանց պատուհաննե-
րի մի սրահ (սարայ) էր երեցածը, որի մէջ տեղը
բաց դուռն էր, իսկ երկու կողմից՝ տախտակները
պոկոտուած էին: Ուղիղ դռան դիմաց՝ մի փոս էր
փորած և կրակը վառում էր այն փոսի մէջ: Քա-
մին շարունակ բորբոքում էր կրակը:

Կրակի շուրջը նստած էին երեք տարօրինակ
մարդիկ, մագերը զգզուած, դէմքերը կաս-կարմիր,
իսկ աչքերը փայլփլուն: Մի-մի կեղտոտ քաթանի
գոգնոց անց կացրած ունէին նրանք իրանց վիզը,
որոնց ծայրերը հասնում էին մինչև կրունկները. մէկ-
մէկ էլ կարճ ծխամորճ դրել էին բերաններին, փրս-
տացնում ու ժամանակ առ ժամանակ ծուխն օդի
մէջ բաց թողնում: Նրանց շորս կողմը գետնի վրայ
թափթփուած էին կաւից շինած, իրար մէջ անց
կացրած բղիկներ:

Նստել էին այդ մարդիկն և ուրախ-ուրախ իրար
հետ, բարձր ձայնով, կոշտ ու կոպիտ խօսքերով,
բայց քաղցր զրոյց էին անում, ծիծաղում, հուհր-
ուում:

Եասը կանգնել էր դռան շեմքի վրայ, բայց չէր
վստահանում ներս մտնել ու այն մարդկանց հետ
խօսել: Նրանց կարմրատակած երեսները, խուպոտ
ձայները և կրակի բոցի պէս փայլող կատաղի աչ-
քերը վախացրին երեխային, թէպէտ և միւս կող-
մից նա շատ ցանկանում էր մօտենալ կրակին ու
մի քիչ տաքանալ: Վերջապէս փոքր ժամանակ ան-
վստահաբար տատանելուց յետոյ, Եասը ներս մտաւ,
մօտեցաւ նստածներին և նուազ ձայնով ասաց.

— Բարի երեկոյ, պարոններ:

Այս մի խօսքը հազիւ արտասանեց նա՝ որ մօտ եղող մարդը նրա երեսին նայեց ու գոչեց.

—Վահ, էստեղ նայեցէք. ո՞վ է այս երեխէն, որ այսպիսի բքին տուն ընկաւ մեզ մօտ:

Նստողներից երկուսը նոյնպէս յետ նայեցին, բայց առաջին անգամ տեսնողն առանց երկար մտածելու մեկնեց իր ցխոտ ձեռքը, բռնեց երեխային և մօտ քաշեց:

—Կտրիճ տղայ, դու այս սրտեղից տուն ընկար մեզ մօտ, էսպէս գիշերով ո՞ր ես քարշ գալիս. ասա տեսնեմ, ինչ ես ուզում մեզանից:

—Մեր տղէք, սա հարուստի ճուտ է երևում, —ասաց երկրորդը.—մուշտակը չէք տեսնում. գըլխարկն ինչպէս լաւն է:

—Ուղիղ ես ասում,—հաւանութիւն տուեց երրորդը.—բանն այս է, սա ինչպէս ընկաւ մեր մէջ:

—Դէ, սիրելիս, պատմիր տեսնենք, հրամանքդ ո՞վ ես,—գոչեց առաջինը:

Եստ լացակրկնած, հեկեկալով պատմեց իր գլխի արկածքը և խնդրեց, որ իրան տուն տանեն:

—Ո՞վ են քո ծնողները, սրտեղ են կենում. ձայն բարձրացրին ամենքը միաբերան:

Եսան ասաց իր հօր ազգանունը, իրանց բնակարանի փողոցն ու տան տիրոջ ազգը:

Այդ բանը շատ մոլորեցրեց նրա ձեռքը բռնողին:

—Էէէ, սիրելիս,—ծոր տուեց նա,—չատ հեռացել ես. էսօր քեզ տուն տեսնել չկայ. ես պարապ չեմ, գործս էլ դեռ չեմ վերջացրել, իսկ իմ որդուս էսպէս գիշերով քեզ հետ չեմ զրկի. ուրեմն դու էս գիշեր կրնես մեր աղքատիկ խրճիթումը, իսկ վա-

ղը, լոյսը որ բացուի՝ մեր Վինցուկը*, ճարն ինչ, քեզ ձեր տունը կհասցնէ:

Այս խօսքը սաստիկ տխրացրեց Եասին. նա սկսեց լալ, ոտները գետնովը տալ և գոչել.

—Ես մայրիկիս մօտ գնալ եմ ուզում, հասկանում էք, մայրիկիս մօտ եմ ուզում:

Մարդը ուշք չդարձնելով Եասի խօսքին՝ ձայն տուեց.

—Վինցուկ:

Յանկարծ մի փոսից, որ Եասը չէր նկատել, դուրս թռաւ մի երեխայ՝ իրանից տարիքով քիչ աւելի, ոտքերը բոպիկ, կապոյտ անդրավարտիքը հազին, վերնաշապկով, մագերը գզգզուած և երեսն աղտոտ: Նա բռնած ունէր ձեռքին կաւից շինած մի բան:

—Հայրիկ, ապա տես, լաւ աքաղաղ է:—Նա մօտեցրեց իր աքաղաղը բերանին ու փչեց. սուր ու զիլ մի ձայն բարձրացաւ:

—Հերիք է, շարութիւնդ թող.—ասաց հայրը.—տես ինչ հարուստի ճուտ է երկնքից մեզ մօտ ընկել. խեղճը ճանապարհը կորցրել է. տար սրան իսկոյն տուն, ասա տատիդ ու մօրդ, թող տաք կերակուր ուտացնեն ու քուն գնեն:

Վինցուկն իսկոյն մօտ եկաւ, Եասի ձեռքը բռնեց և կամաց ասաց.

—Գնանք, պատիկ աղայ:

Իսկ մեր «հարուստի ճուտը» լալիս էր ու չէր

*) Վինցուկ՝ կրճատուած Վիկենտիոս:

ուզում գնալ.—ես իմ մայրիկիս եմ ուզում,— գո-
ռում էր նա:

—Հերիք լաց լինիս, շուտ, իսկոյն առաջ ըն-
կիր, գնա՛ ուր քեզ տանում են:

Եսսը վախեցաւ և սուսիկ-փուսիկ գնաց Վին-
ցուկի հետ:

—Հեռու է ձեր տունը,—հարցրեց նա անվստահ
ձայնով՝ երբ իրանք դուրս եկան խրճիթից:

Վինցուկը բռնել էր Եասի ձեռքն և բոպիկ ոտ-
քերով ձիւնի երեսին թռչկոտում:

—Ոչ, փոքրիկ աղայ,—սիրով պատասխանեց
նա.—մօտ է: Մենք բնակւում ենք «բրուտների փո-
ղոցումը», որ քաղաքից մի վերստաշափ հեռու է:
«Բրուտների փողոց» կոչում են այն պատճառով,
որ այս գլխից այն գլուխ՝ այստեղ միայն բրուտ-
ներ են կենում:

Եասն իր կեանքումն այդպիսի փողոցի անուն
չէր լսել. նա քիչ մտածելուց յետոյ՝ հարցրեց.

—Իսկ ո՞վ էին կրակի մօտ նստած պարոն-
ները. ինչ են անում նրանք այնտեղ:

Վինցուկի ծիծաղը բռնեց:

—Ի՞նչ պարոններ են նրանք. բոլորը բրուտ-
ներ են,—պատասխանեց նա:

Վինցուկը բացատրեց Եասին, թէ հետը խօ-
սողն իր հայրն էր, իսկ միւս երկուսը հարևան-
ներ էին, որոնք իր հօր հետ ընկերութեամբ շինել
են այն խրճիթը, որովհետև իր հայրն աղքատ էր,
չէր կարող մենակ շինել: Նրանք շինել են և միասին
էլ ընկերութեամբ ամաններ են թրծում, շարունա-
կեց Վինցուկը. այսօր շատ-շատ են թրծել և էլի

նորերը դրել են հնոցը, ուզում են բոլորը մի ան-
գամից վերջացնել... Հասկացանք հիմի բրուտի գոր-
ծը,—ուրախ-ուրախ թռչկոտաց նա և աւելացրեց.

—Ինքս էլ պիտի բրուտ դառնամ. հայրիկս
ինձ պիտի սովորցնէ: Հէնց օրն այս օր՝ իմ ձեռով
մի սիրուն աքաղաղ եմ շինել: Օ՛հ, մեր Մարիլկան
(Մարիամիկ) ի՞նչքան պիտի ուրախանայ:

—Դա ի՞նչ Մարիլկա է:

—Մարիլկան իմ պստիկ քոյրս է, երեք տա-
րին նոր է լրացրել. ես մի ուրիշ պստիկ քոյր էլ
ունիմ, նա դեռ օրօրոցումն է:

Խօսելով ժամանակն այնպէս անց կացաւ, որ
Եասը չնկատեց, թէ ինչպէս յանկարծ բուսան
իրանք մի փողոցում, մի տան առաջ: Վինցուկը
դուռը բաց արեց:

—Այս էլ քեզ մեր խրճիթը,—ասաց նա.—օօօ,
տատս պիտի կուռի ու կուռի. նա միշտ կուռում
է: Դեռ խօսքը բերանին էր՝ որ մի բան շրխկաց
յատակին. Եասն էր մթնումը չգիտեմ ինչի դի-
պել ու շուռ տուել:

Նոյն րոպէին պատի միւս երեսից լսուեց մի
բարկացած ձայն:

—Այն ո՞վ է հաշտը խառնշտորում, քարուքանդ
անում. երևի դո՛ւ ես, շարաճճի Վինցուկ:

Դուռը յետ բացուեց, և Եասը մտաւ մի ընդար-
ձակ, բայց ցած սենեակ, որի պատերն ու առաս-
տաղը մխից սևացել, ապուխտ էին դարձել: Պատի
տակ դրուած էին սեղան ու աթոռներ. կար այն-
տեղ և մի երկար իշտոնուկ (նստարան), իսկ սենեա-
կի մէջտեղը, օճախի մէջ կրակ էր վառւում: Վրա-

կի մօտ կանգնած էր մի կին, որին երբ Եասը տեսաւ՝ վախեցաւ ու հագիւ յետ բացուած քիթ ու պռունկը նորից ժողովեց:

Մի բարձրահասակ, լղար, հինաւուրց պառաւ էր կինը, որի դէմքը կիտրոնի նման դեղին էր, իսկ երեսն այնքան կնճռոտած էր, որ եթէ ասեղի ծայրով էլ քրքրելու լինէիր՝ հարթ հաւասար տեղ չէիր գտնի: Ատամներից, ինչպէս երևում էր՝ պառաւը վաղուց էր ձեռք քաշել, իսկ արծուի կտուցի պէս կռացած քիթը համարեա եկել հաւասարուել էր նրա սրածայր, դուրս պրծած ծնօտի հետ: Պառաւի գլխի կարմիր փաթաթանի տակից սպիտակ մազերը դուրս էին թափուել ու երեսին շող անցել: Նա հագել էր հաստ, կտուի շապիկ ու կարճ շրջագեստ, կանգնել էր կրակի մօտ և տաքացնում էր շորացած ձեռքի թաթերը. նրա յետ բացուած մատները կարծէիր գիշակեր թռչունի ճանկեր լինէին:

Պառաւը երեսը շրջել էր դէպի դուռը և ճշում իր թոռի վրայ, թէ նա ինչու է այսքան ուշ տուն եկել:

Եասը վախենում էր տեղից շարժուելու, իսկ Վիկենտիոսը կամաց քշփշաց նրա ականջին, թէ պառաւից վախենալու հարկ չկայ. իր տատը թէև շատ գոռգոռում է՝ բայց ոչ ոքի վնաս չէ տալիս: Նա բռնեց Եասի ձեռքը, տարաւ տատի մօտ և պատմեց՝ ինչ որ հայրն իրան պատուիրել էր:

Պառաւը ձայնը կտրել էր ու հետաքրքրութեամբ Եասին մտիկ տալիս:

—Անուլ'կա (Աննիկ), Անուլ'կա, — կանչեց պառաւը:

Մի տախտակէ միջնապատով բաժանած սենեակի դռան մէջ, երեխան գրկին, երևաց մի ջահէլ կինարմատ՝ թուխ գեղեցիկ մազերով և գունատ ու նիհար դէմքով: Կինը գրկած ունէր մի երեք տարեկան աղջիկ, որ գլուխը դրել էր մօր ուսին ու քնել:

—Մարիլկա, — կանչեց Վիկենտիոսը, — Մարիլկա ջան, տես, քեզ համար ինչպիսի աքաղաղ եմ բերել:

Երեխան զարթեց, եղբօր ձեռքից աքաղաղն առաւ և մօր գրկից ցած իջաւ: Մի շատ լաւ աղջիկ էր Մարիամիկը, հաստ կտուի շապիկը հագին, ոտքերը բոպիկ, երեսը նիհար ու կտուհատի գունով փայլուն մազերով:

Պառաւը սկսեց յանդիմանել ջահէլ կնոջը, որ ինքը հիւանդ տեղով՝ այնպիսի մի աղջկանը գիրկն է առել. բայց երբ լսեց, որ երեխան խաղացել է ու իր գոգումը քնել՝ ձայնը կտրեց ու մատով Եասին ցոյց տալով՝ պատմեց, թէ ինչպէս է նա իրանց մօտ ընկել:

—Խեղճ երեխայ, — զարմացած գոչեց ջահէլ տանտիկինը: Նա չոգեց ու սկսեց Եասի վերարկուն հանել: Նոր էր տանտիկինը հանել Եասի թևից մուշտակը՝ որ ամեն կողմից բարձրացան զարմացական բացազանջութիւններ:

Նոյն ինքը տանտիկինը երկու ձեռքն իրար խփեց ու գոչեց. — այս ինչ հիանալի շորեր են: Պառաւը նոյնպէս գլխով արեց Եասին և ժպտալով ու կիսահեղինութեամբ ասաց.

—Տեսնում ես ինչպէս է պճնուել, կարծես իս-

կական հարուստի ճուտ է, և հէնց հարուստի ճուտ է որ կայ:

Մարիամիկն աչքերը չուած մտիկ էր տալիս Եասի ոսկու նման փայլող հագուստին, իսկ Վիկենտիոսը ծունկը գետնին էր տուել ու տնտղում նրա պայտած կօշիկներն ու պողպատէ կոճակներով զարդարուած գօտին:

—Ա՛յ սիրուն գօտի, ա՛յ գեղեցիկ գօտի,— գոչում էր նա:

Ամեն կողմից սկսեցին Եասին հարցմունքներ անել. նա էլ մէկ-մէկ պատմում էր իր գլխի արկածքները և ախորժակով ուտում պառաւի տուած, աղ արած գետնախնձորները:

Այս խօսք ու զրոյցի ժամանակ՝ դուռը յետ բացուեց, և ներս մտաւ մի բարձրահասակ, արեգարդ, բայց դեռ կայտառ ծերունի: Նա ուսովը քցած ունէր մի ինչ-որ երկար պողպատէ գործիք: Եասը վախեցաւ և շշկած աչքերը տնկել էր ու տնտղում էր, ինչ էր ծերի ուսի փայլուն բանը, և երբ ալևորը կրակին մօտեցաւ՝ այդ ժամանակ միայն Եասը նկատեց, որ գերաններ կտրելու մեծ սղոց էր:

—Գիտես, մէրիկ, ինչ կայ,— ասաց ծերը,— այսօր ես էլ մի իրիկնահացի գին աշխատել եմ:

Փնթփնթալով ինչ-որ պատասխանեց պառաւն ու երեսը շրջեց: Նա չէր սիրում, որ անժամանակ իր հետ իրիկնահացի խօսք բաց անեն:

Չատ չանցաւ՝ ծերունուց յետոյ տուն եկաւ ինքը բրուտը:

—Ինչո՞ւ այսպէս վաղ, Եանիկ (Եան—Օհան), — ու-

ըախ դէմքով հարցրեց բրուտին իր ջահէլ կինը: —Կէս գիշերից վաղ ես ձեզ չէի սպասում:

—Ա՛յ, այս «աղայ ճուտի» պատճառով սիրտս անհանգիստ էր:

—Հապա գործդ ինչպէս բաց թողիր:

—Վնաս չունի, մի տեսակ կվերջացնեն. շնորհակալ եմ հարեաններիցս. խոստացան իմ փոխարէն մինչև վերջը նստել. իսկ ես երկիւղ արի,— աւելացրեց բրուտը պառաւին ակնարկելով,— թէ չլինի դուք երեսային վախացնէք:

Պառաւը կրակի առաջին կանգնեց, սկսեց խոզի ճարպ հալել, իսկ Եասը մօտը կանգնել էր և աչքը տնկել, հետաքրքրութեամբ մտիկ տալիս, որ տեսնէ, թէ ինչ է անում տատիկը: Խեղճ Եասն իր մէջ վախում էր, թէ պառաւն իր վրայ կբարկանար, անտեղի հետաքրքրութեան համար իրան կհասնէր, բայց պառաւի քաղցր նայուածքն իրան միամտացրեց: Այն ժամանակ Եասը սիրտ առաւ ու աչքով դէպի ծերունին նայելով՝ ակնարկեց պառաւին: Ծերը այդ ժամանակ հանել էր վրայից պատուած վերարկուն և նստել իշոտնուկի վրայ:

—Տատի,— հարցրեց Եասը,— ո՞վ է այդ ծեր մարդը որ եկաւ:

—Ա՛յ դու «աղայ ճուտ», տեսնում ես, ինչ հետաքրքիրն ես. շատ լաւ, կասեմ. դա իմ մարդն է... Հը՛, ինչ ես մտիկ տալիս. չըլինի՞ դու կարծում ես, թէ մօրիցս էսպէս պառաւ եմ ծնել: Ո՛չ, սիրելիս, ես էլ ջահէլ եմ եղել. ես էլ մի ժամանակ հարուստ տնտղում ծառայել, սպասուհի ու լուացքարար եմ եղել: Յետոյ ես ամուսնացայ այս ծերի

հետ, որ այն ժամանակը նոյնպէս երիտասարդ էր: Սա ինքը հիւսն է, ինքը կարողութեան տէր մարդ էր: Է՛յ, հէյ... շատ շար ու բարիք են այն օրից դէսը անցել մեր գլխովը, շատ նեղ օրեր ենք քաշել: Աստծու կամքը չէր, որ մենք մի քանի սև փող ծերութեան օրերի համար յետ պահէինք: Վերջը՝ մեր աղջիկը տուինք այս բրուտին ու սրանց հետ միասին ապրում ենք: Իմ ալեւորս, թէպէտ էլ չէ կարողանում հիւսնութիւն անել, բայց չէ ցանկանում փեսայի տանը ձրի հաց ուտել. վառելափայտ է սղոցում:

—Այսօր վառելու փայտ շատ սղոցեցիր, հէրիկս, — հարցրեց պառաւը մարդին:

—Ամբողջ կէս սաժէն, մէրիկս, ամբողջ կէս սաժէն, — հպարտ հպարտ պատասխանեց ծերը:

—Ծիծաղս դալիս է, տատիկ, — ասաց Եասը.

—այդ ինչպէս է կարելի. դու ասացիր, որ նա քո մարդն է. հապա ինչի նա քեզ «մէրիկ» է կանչում, իսկ դու նրան «հէրիկ»: Իմ հայրիկս միշտ մայրիկիս անունն է տալիս, այնպէս ալ մայրիկս՝ հայրիկիս:

Այս խօսքի վրայ՝ պառաւը քաղցր հայեացք ձգեց «հարուստի ճուտի» երեսին, մի հայեացք, որ ծերունիքը դարձնում են իրանց ջահէլութիւնը յիշեցնող առարկաների վրայ, որոնք յիշեցնում են նրանց անցեալ կեանքի երջանիկ ըրպէսները:

—Ախար ես ասում եմ, որ դու հետաքրքիր երեխայ ես, ազայ ճուտ, — ասաց պառաւը. — հապա մօտ արի և լսիր, տես քեզ ինչեր պիտի պատմեմ:

—Ա՛խ սիրելիս, — խոր հառաչ քաշեց պառաւը.

—շատ երկար կըքաշէր, մինչև ես նստէի ու մի առ-

մի հասկացնէի քեզ, թէ ինչի աղքատ մարդիկն իրար «հէրիկ» ու «մէրիկ» են կանչում: Գիտե՞ս ինչ. հարուստ մարդկանց համար հայրն ու մայրն այնքան հարկաւոր չեն, ինչքան մեզ խեղճերիս համար: Հարուստներն ունին մեծ-մեծ սենեակներ, շատ ծառաներ, որ իրանց հրամանները կատարում են, և փող, որ իրանց կարիքի ժամանակ պէտք է գալիս և զանազան հոգսերից ազատում է: Իսկ մենք, ընդհակառակն, կարօտութիւն ու նեղութիւն շատ ունինք և միմեանց պէտք ենք գալիս: Մարդս քրրտինք է թափում, ինձ համար կտոր հաց է աշխատում. իսկ ես՝ տնարարութեան և տանտիկնութեան հետ եմ լինում, որ ամեն ինչ իր ժամանակին հասնի: Երբ սա հիւանդանում է՝ ես փոքրիկ երեխայի նման սրան պահում եմ, մտիկ եմ տալիս: Հէնց այդ է պատճառը, որ սա ինձ «մէրիկ» է կանչում. իսկ եթէ ես նեղութիւնի մէջ եմ ընկնում, իմ մարդիցս աւելի ո՞ւմ կարող եմ դիմել, ո՞ւմնից կարող եմ խորհուրդ հարցնել, ո՞ւմնից օգնութիւն սպասել, եթէ ոչ իմ մարդից: Մի՞թէ ուրեմն, սա ինձ համար հարազատ հայր չէ: Մեր մէկի դարդն ու ուրախութիւնը հաւասարապէս պատկանում է մէկէլին, մէկիս բախտաւորութիւնը միւսինս նոյնպէս է: Ահա թէ ինչի եմ ես սրան «հէրիկ» կանչում, իսկ սա ինձ «մէրիկ»: Է՛հ, միայն մենք հօ չենք. բոլոր խեղճ մարդկանց մէջ էդպէս է ընդունուած:

—Բայց մի՞թէ դուք խեղճ էք, տատիկ:

—Խեղճ ենք, հոգի ջան, խեղճ ենք:

—Ինչի էք խեղճ, չէ որ քո փեսան բրուտ է:

—Ա՛խ, ազայ ճուտ ջան, սիրուն ջան, դու հէնց

կարծում ես, թէ բրուտները հարուստ մարդկանց պէս են ապրում: Ամաններ շինելով ու վառելափայտ սղոցելով՝ ցամաք, օրական կտոր հացից աւել մի-թէ կարելի է աշխատել. մանաւանդ եթէ տանը եօթը հոգի ուտող կան և դեռ մէջերնին հիւանդներ էլ կան: Այ, մէկը հէնց իմ Աննիկս, երկու տարի է ահա հիւանդ է. իսկ իմ Օհանը աղջկանս համար կեանքը չէ խնայում... բերանդ բաց կմնայ, եթէ նստեմ, մէկ-մէկ հաշիւ տամ բժիշկների ու դեղերի ծախսը... Չպիտի զարմանաս, եթէ ասեմ, որ երբեմն կիրակի օրերը մսի փող չէ մնում:

— Էլ ինչի միայն կիրակի օրերը, — հարցրեց Եասը:

— Որովհետև մենք միս ուտում ենք միայն կիրակի օրերը, այն էլ ոչ ամեն ժամանակ:

— Մէրիկ, — ձայն տուեց քաղցածացած ծերունին անհամբերութեամբ. — շատ պիտի սպասենք ընթրիքին, շոտ հաց կտար:

Մարդի խօսքերը պառաւի բարկութիւնը բերին. նա Եասին թողեց, կպաւ մարդի օձիքից:

— Միթէ չես տեսնում, «հէրիկ», որ նիկողայոսը դեռ չէ եկել:

— Եօթը հոգի են եղել, — մտածեց Եասը՝ մէկ-մէկ բոլորին համարելով. — իսկ տանը միայն վեց հոգի են, երևի եօթներորդը նա է, որին սպասում են. Եւ նա մօտեցաւ Մարիամիկին և Վիկենտիոսին ու հարցրեց.

— Ո՞վ է եօթներորդը:

— Հապա Մագդուսեան, — ասաց Վիկենտիոսը: — նա կողքի սենեակումն է. արի գնանք, ես քեզ ցոյց տամ:

Եւ երեսայքը տարան Եասին կողքի տախտակակապ սենեակը:

Այնտեղ փայտէ մոմակալի մէջ մի կտոր ճարպի մոմ էր վառուում: Սեղանի և մահճակալի մէջ տեղը մի օրօրոց էր զրուած: Եասը նայեց և տեսաւ մէջը մի փոքրիկ, հեզերես, կարմրաթուշիկ աղջիկ, որի մազերը բոլորովին Մարիամիկի մազերի գոյնին էին: Փոքրիկ աղջիկը փափլիկ թաթիկները փռած՝ անուշ քնած էր. ինչպէս երևում էր՝ երագում ինչ-որ տեսնում էր, որովհետև շուտ-շուտ ժպիտըն երեսին խաղում էր:

— Տեղն ու տեղը՝ կարծես իմ մօտիկ ժամանակներս մեռած, փոքրիկ քոյրը լինի, — գոչեց Եասն և կռացաւ, համբուրեց երեսայի վարդագոյն թաթիկը: Մարիամիկն էլ բարձրացաւ Վիկենտիոսի ծնկանը և միւս թաթը պաշեց:

Եասն աչքերը ածած՝ հետաքրքրութեամբ դիտում էր ննջարանը. յանկարծ նա նկատեց վառարանի մօտ, գետնին շաղ անցած, մի քանի խաղալիքներ: Մօտ գնաց Եասը և շոգեց խաղալիքների մօտ: Մարիամիկն ու եղբայրն էլ եկան և նստեցին նրա դիմացը: Եասը վերցրեց գետնից կաւից շինած մի սևագոյն բան և հարցրեց.

— Այս ինչ է:

— Փիսիկ է, — սլատասխանեց Մարիամիկը:

— Հա՛, կատու է, — հաստատեց եղբայրը քրոջ խօսքը:

Եասը ծիծաղեց:

— Ենթադ, ինչ յիմար բան. միթէ սա կատուի նման է:

Վիկենտիոսը լռեց ու քիթը կախեց, որ Եասն իր սիրած խաղալիքն արհամարհեց. իսկ Մարիամիկը ծափ էր տալիս և ձեռքը խաղալիքի գլխին քսելով՝ կանչում:

—Փխիկ է, փխիկ է, իմ սիրունիկ, իմ նաչ-խունիկ փխիկն է:

—Հապա ա՛յս ինչ է,—վառարանի տակից մի խաղատիկին հանեց ու հարցրեց Եասը: Տիկինը շինած էր գոյնզգոյն փալասի կտորներից, մի փալաս էլ, բոլորակ փաթաթած՝ գլուխ ու երես էր շինած, որի վրայ թանաքով նկարած էր քիթ, բերան, աչքեր ու մազեր:

—Այս իմ տիկնիկս է, իմ երեխան է, իմ աղջիկս է,—պատասխանեց Մարիամիկն ու տիկինը Եասի ձեռքից խլեց:

—Օ՛օօֆֆֆ, ինչ տգեղ ու զգուելի բան է,—քիթ ու մոռլթը ժողոված կանչեց Եասը:

Մարիամիկը, հէնց կարծես, ուզեցաւ իր վիրաւորուած տիկինի սիրտն առնել. նա քնքշութեամբ գիրկն առաւ խաղալիքը, սեղմեց կրծքին և սկսեց ձեռքի մէջ օրօրելով նանիկ կանչել. «նանիկ արա, տիկնիկ ջան, անուշ քնի, բալիկ ջան...»

Այդ բոլորը անպիտան բաներ են,—վճռաբար պնդեց Եասը.—այ իմ խաղալիքներս խաղալիքներ են: Եւ նա սկսեց պատմել, թէ ինքն անիւների վրայ հաստատուած մի մեծ փայտէ ձի ունի. որ կամաց ձեռք տաս՝ կսկսի սենեակի մէջ ման գալ. գոյգ ոսկեգոյն ձիանք լծած սահնակ ունի, առջևը նստած է, կապոյտ մահուտէ խալաթը հագին՝ կառապանը. սահնակի վրայ կարող են ազատ տեղա-

ւորել երկու տիկնից: Ես ունիմ նմանապէս,—ասաց Եասը,—մի իսկական հրացան, որ պիտո՞նը զնես ու սեղմես թէ չէ՝ իսկոյն կտրաքի ու այնպէս բարձրը ձայն կհանէ, որ միւս սենեակումը կլսուի. ունիմ նոյնպէս լաւ-լաւ փառակազմ գրքեր, գեղեցիկ պատկերներով մէջերն. ինչ ուզես կայ.—զազաններ, թռչուններ, ծառեր, ծաղիկներ, և այնպէս լաւ նկարած են, որ կարծես իսկական կենդանիք լինին: Երեսալքը շունչերը փորը քաշած լսում էին:

—Բախտաւոր էք դուք, պստիկ աղայ,—նախանձելով ասաց Վինցուկը.—մենք այդպիսի խաղալիքներ մեր օրումը չենք տեսնի:

Եասի սիրտը ցաւեց. նա սկսեց մխիթարել Վիկենտիոսին:

—Համբերիր,—ասաց Եասը.—դու երբ ինձ տուն կտանես՝ ես բոլորը քեզ ցոյց կտամ, և եթէ թոյլ կտան՝ կարելի է մի բան էլ կընծայեմ... Ես անպատճառ մայրիկիցս կխնդրեմ, որ նա Մարիամիկի համար մի լաւ խաղատիկին առնէ, որ ունենայ քիթ, աչքեր, մաքուր ատլասից կարած շորեր և մազերն էլ իսկական մարդի մազեր լինին:

Եասի բերանից հազիւ էին դուրս եկել այս խօսքերը՝ որ Վինցուկը երկու ձեռքով փաթաթուեց նրա վզովն ու այնպէս պինդ պաչեց՝ որ իր վրայ կպած կաւի կոշտերը դրոշմուեցին Եասի երեսին: Ուրախութիւնից Վինցուկը սկսեց յատակի վրայ թաւալ-թաւալ գալ. ապա նստեց սենեակի մէջտեղը, մարզարտի պէս սպիտակ ատամները բաց արեց ու սկսեց ծիծաղել, հռհռալ ու կչկչալ: Իսկ Եասն իր կողմից զեռ առաջ մաքրեց իր վրայի

կաւերը և յետոյ վրայ պրծաւ, բռնեց Մարիամի-
կին ու երկու թուշը կուշտ ու կուռ պաշպչեց:

— Եկէք իրիկնահաց կերէք, երեխէք, — լսուեց
պառաւի սուր ձայնը:

Բոլորը վեր թռան և առաջկտրուկ անելով՝ գնա-
ցին մեծ սենեակը: Եսար յանկարծ կանգ առաւ,
մնաց. նա և՛ զարմացաւ և՛ մասամբ վախեցաւ:

Սեղանի մօտ, երկար իշոտնուկի վրայ, ծերու-
նի փայտ սղոցողի և բրտի ջահէլ կնոջ մէջտեղը,
նստած էր, շալի պատուտուած բաճկոնը հագին,
սպիտակամօրուս մի ալևոր ծեաղ: Եսար նրան
ճանաչեց. սա այն ծեաղն էր, որ այսօր, տոպրակն
ուսին կախ՝ եկել էր իրանց տունը և ողորմութիւն
էր խնդրում: Դեռ Եասի ուշքը գլուխը չէր եկել,
որ մուրացկանն էլ իր կողմից ճանաչեց նրան:

— Աստուած իմ, — տնտղելով երեխային, գոչեց
ալևորը. — սա այն փոքրիկ աղան է, որ այսօր ինձ
15 կոպէկ տուեց: Ես իմ աչքովս տեսայ, թէ մեր
«պանի»* որդին ինչպէս էր քաշում, կուշ ու ձիգ
անում ու վախենում. այ, այ, այ, ինչպէս էր վա-
խենում ինձ պէս մի գզգզուած պապից: Ասենք,
ես զրան վիրաւորելու համար չեմ ասում, բոլոր
ազայ մարդկանց տներումը այդ սովորութիւնը կայ:
Դեռ օրօրից՝ հարուստների երեխաներին պապերով
(ծեաղտրով) երկիւղ են տալիս:

— Վայ, վայ, վայ, ինչպէս մեղք բան է, ինչպէս
ամօթ է խեղճ մարդկանցից երկիւղ անելը, — նկա-
տեց ծերունի սղոց քաշողը՝ հաց կտրատելով:

* Լեհերէն նշանակում է պարոն:

— Ո՛չ, ես պապերից չեմ վախում, բոլորովին
չեմ վախում. այն առաջ էր՝ որ վախենում էի...

— Եթէ այդպէս է՝ — ասաց պապը ծիծաղելով, —
արի, կողքիս նստիր, միասին ընթրիք անենք: —
Եսար շփոթուեց. նա թէպէտ ամաչում էր իր փո-
քրոգութիւնից, բայց զժուար էր իրան միանգամից
վերջ տալ իր սովորութեանը. երկար ժամանակ նա
կանգնել էր ու մոլորուել, չէր իմանում ինչպէս
վարուի:

Նրան նեղ զրութիւնից հանեց բրտի կինը. նա
հրաւիրեց Եասին նստել իր և պապի մէջտեղը:
Այնքան քաղցր ու քնքոյշ ձայնով խօսեց տանտի-
կինը՝ որ Եասն իսկոյն գնաց, ցոյց տուած տեղը
նստեց:

Նրանց դիմացը նստեցին բրուտն ու Վինցուկը:
Հայրը նստացրել էր Մարիամիկին իր ծնկանը,
իսկ պառաւը կերակուր էր ածում. նա զրեց սե-
ղանի վրայ մի մեծ քերեղան (կաւէ աման) ձաւա-
րասպաս և ամեն մէկին մի-մի փայտէ զրգալ տուեց.
վերջը ինքն էլ գնաց, նստեց մարդի կողքին:

Միմիայն Եասի առաջը զրին տանու շինած
մի աման: Մնացածները բոլորը միասին ուտում
էին միևնոյն քերեղանի միջից: Այս բանը մեծ
զարմանք պատճառեց Եասին: Նա ուզում էր հար-
ցնել և իմանալ, թէ այդ ինչ սովորութիւն էր
նրանց մէջ, մէկ էլ՝ պառաւն ընդհատեց.

— Հը՛, փոքրիկ աղայ, ինչպէս տեսնում եմ՝ դու
չէիր սպասում, թէ մեզ մօտ կհանդիպէիր նիկո-
ղայոս պապին: Հիմի իմացիր, որ ես սորան վաղուց
ժանօթ եմ: Անցեալներումը ես ու սա միևնոյն

տներում իրար հետ ծառայել ենք. ես լուսացքարա-
րութիւն էի անում, սա կառապանութիւն:

Պառաւի խօսքերը գրաւեցին Եասի ուշքն ու
միտքը. նա ցնդածի պէս սիրում էր ձիանք, և նրա
աչքումը կառապանը շատ հետաքրքիր անձնաւորու-
թիւն էր: Նա յետ շրջուեց, և առաջին անգամ,
առանց քաշուելու, ազատ, համարձակ ու խորին
ուշադրութեամբ նայեց պապի երեսին:

Պապն իսկոյն հասկացաւ, որ ինքը Եասի ու-
շադրութիւնը գրաւեց.

—Այո, ես կառապան էի,—ասաց պապը,— և
այն էլ ինչ կառապան... Գեռ մի մատն երեխայ
էի, որ ինձ տարան գիւղից և դրին գոմի մէջ ծա-
ռայութեան. վերջը, երբ ես հասակս առայ, ոտ ու
ձեռքս կաղնու ճղքան պէս պնդուեցին, ընչացքներս
սեւացան ու այնքան երկարեցին, որ կրծքիս էին
առնում՝ մեր լսի բաժին աղէն վճռեց, որ ես լաւ
կառապան կարող եմ դուրս գալ:

Եասը վերև մտիկ տուեց և ծիծաղը չկարաց
զսպել: Պապի ընչացքները թէպէտ հիմա էլ թան-
ձրը ու երկար էին, բայց կաթի նման սպիտակել էին:

Պապը կարծես հասկացաւ Եասի մտքինը և
չարունակեց.

—Քեզ ծիծաղելի է թւում ի հարկէ, պստիկ
աղայ, և չես հաւատում, թէ մի օր իմ ընչացք-
ներս սև են եղել: Գու ինձ այն ժամանակը պէտք
է տեսած լինէիր. դու պէտք է իմանայիր, թէ
ինչ ոյժ կար կռներումս, ինչ ճարպիկ ու կտրիճն
էի: Պատահում էր, որ վեց ձին լծում էի ու թրու-
ցնում դար ու փոս, խոռ ու փոթ ճանապարհնե-

րով: Օհ, ինչպէս սիրում էի ես այդ բանը: Թէ-
կուզ ինչքան կամենային՝ թռչէին ձիանքս, ինչ-
քան ուզէին՝ տաքանային ու իրանց կտրատէին.
հերիք էր, որ երասանակը (սանձ) ձեռիս էր. նրանք
ոչ միայն չէին կարողանում փախցնել. անիւն ան-
գամ քարի չէր առնում, կամ մի տեղ բանդ ըն-
կնում: Միայն ոյժս ու ճարպիկութիւնս հօ չէր.
ձիերի կողմից էլ բախտ ունէի. ձիանքն ինձ սիրում
էին, սիրում էին ինչպէս որդիքն իրանց հօրը: Գի-
տես ինչու:—էդ իմ գաղտնիքս էր, և բոլոր գաղտ-
նիքս էն էր, որ ես գիտէի ձիանոնց հետ վարուե-
լու եղանակը. ես վարում էի նրանց հետ՝ ինչպէս
իմ հարազատ զաւակների հետ: Ուզում եմ ասել՝
գիտէի և ճանաչում էի ամեն մէկի բնաւորութիւնը,
սովորոյթը.—մէկի հետ խիստ էի վարում, միւսի
հետ քաղցր, երրորդի հետ բոլորովին սիրով ու
քնքշութեամբ, բայց զգոյ՜ ինչպէս վառօդը կրակի
մօտ: Չատ անգամ ես իմ բերանից հացը կտրում
էի, նորանց ուտացնում. մէկ էլ՝ երբ նրանց հետ
քաղցր զրոյցի էի բռնւում ու սէր ու սոհբաթ անում՝
էլ չէի հասկանում, թէ ժամն ու ժամանակն ինչ-
պէս էր թռչում, անց կենում: Ձին գլուխը դնում
էր ուսիս, աչքերը քցում աչքերիս և կարծես թէ
հէնց հիմի հետս պիտի խօսի... Գլխաւորն ինչ է.
ձիանքը ճանաչում էին ոչ միայն իմ ձայնը, մին-
չև անգամ իմ ոտքերի քայլերը: Պատահում էր, որ
ես դեռ գոմը չմտած՝ ձիանքը բոլորը միասին զը-
լուխները յետ էին դարձնում և խրխնջում. կնչա-
նակէ՝ հասկանում էին, որ ես գալիս էի: Իսկ ձայնս
եթէ հարցնես՝ լսի՛ր, պստիկ աղաս, որ պատմեմ:

Պատահում էր, որ լծում էի վեց այնպիսի ձիանք, որ ինչպէս առակներումն ասում են՝ քթերիցը ծուխը քուլա-քուլա էր դուրս փչում: Ամենայն դորութեամբ բաց էի թողում նրանց ընդարձակ ու երկայն բազի մէջ. իսկ մեր աղաները դռան առաջին կանգնում էին ու սիրահարուած մտիկ տալիս ու փառաւորում... Հասկանում ես ասածս. ձիանքս թռչում էին ինչպէս թեւաւոր. իսկ մինչև դուռը մի քայլ է մնացել: Որ ասես՝ երասանակն էլ չէի շարժում. բաւական էր՝ որ կամաց տպուուունը անէի, և ահա վեցը միասին, 24 ոտը դէմ էին տալիս ու մնում տեղերը տնկուած. բնաւին ոչ մէկը ոչ փչացնում էր, ոչ իրան թափահարում. մխուած մնում էին ու սպասում, թէ ինչ պիտի հրամայեմ:

Այնպիսի ուշադրութեամբ էր լսում Նասը պապի պատմութիւնը, որ մի քանի անգամ ձաւարասպասով բերանն այրեց: Նա պապի երեսից աչքը չէր հեռացնում և լաւ նկատում էր, թէ ինչպէս պապը խօսելու ժամանակ ամեն ինչ մոռանում էր: Նա այնպէս վառւում էր, այնպէս կրակ էր կտրում, որ թւում էր, թէ իրան որ գեղեցկացել էր: Ձիանափայլ յօնքերի տակին նրա աչքերը ճրագի պէս փայլվում էին, մինչև անգամ երեսի կնճիռների կէսը կորել, անհետացել էր:

Իսկ պապն իր կողմից, երբ նկատեց, որ երեսան այլ ևս իրանից չէ խրտնում՝ գրկեց նրան, նստացրեց ծնկանը և ձեռքի վրայ թուցնելով՝ սկսեց երգել:

Ընթրիքը վաղուց արդէն վերջացել էր. երեսան չի էլ նկատեց, թէ ինչպէս անց կացաւ երե-

կոն և արդէն քնելու ժամանակն էր: Նա նստել էր պապի ծնկանը, լսում էր նրա պատմութիւններն և ուրախ-ուրախ քորում, հռհռում էր:

Ամենքն աղօթեցին ու պատրաստուեցին քնելու: Բրուտն իր մահճակալը տուեց Նասին ու ինքը պառկեց իշտանուկի վրայ:

Յոգնած ու դաղրած Նասն իսկոյն քնեց: Գիշերուայ մի ժամանակը նա գարթեց ու յիշելով, որ ինչն օտար տան է՝ քիչ մնաց լար, բայց նրա ուշադրութիւնը գրաւեց օրօրոցը:— Բրտի կինը «նանիկ» կանչելով՝ օրօրում էր լաց լինող Մարիամիկին:

Մէկ-մէկ մայր ու երեխայ լսում էին, բայց նորից շարժում էր օրօրոցը և լսում բրտի կնոջ նանիկը:

— Նանիկ, նանիկ, աղջիկս, նանիկ, իմ նաչխունիկս...

Նասը յիշեց, որ իր քրոջ հիւանդ ժամանակ՝ իր մայրիկն էլ ողջ գիշերներ անքուն նստում էր երեխայի գլխավերևը: Օրօրոցը շարունակ թրրխկթրխկում էր ու մայրիկը «նանիկ» էր կանչում:

Չատ չանցաւ, բրտի կնոջ «նանիկի» ազդեցութեամբ՝ Նասն ինքն էլ խոր քուն մտաւ:

Կարող էր երևակայել Նասի հօր ու մօր ուրախութիւնը՝ երբ միւս առաւօտը բրուտը նոր շորերով զարդարուած՝ բերեց երեխային ծնողաց մօտ բոլորովին առողջ ու գուարթ:

Բրուտը մի գոգ լիքը խաղալիքներ տարաւ Վինցուկի ու Մարիամիկի համար, հետն էլ մի բեռը շնորհակալութիւն. նմանապէս և իր ամբողջ ընտանիքին Նասի կողմից շատ-շատ բարեկեր:

Այն օրից սկսած Նասի ամենասիրելի գրօսատեղին դարձաւ «Բրուտների փողոցը» և ուրիշ նման փողոցներ, որտեղ խեղճ մարդկանց բնակարաններն ու ապաստանարանն են: Նա մեծ սիրով և յօժարութեամբ այցելում էր կիսաւեր խրճիթները և ամեն անգամ տանում էր հետը՝ երեխաների համար՝ խաղալիքներ ու քաղցրեղէններ, իսկ ծերերի համար՝ դրամական օգնութիւն: Նասն այլևս ձեռադերից չէր վախենում: Ընդհակառակն, նրանցից մի քանիսի հետ ծանօթանալով՝ սիրում էր նրանց հետ քաղցր մասլահաթներ անել և ամենայն սրտով կարեկցում էր նրանց վշտերին ու թշուառութիւններին: Յարմար ժամանակները՝ նա միշտ հարց ու խնդիր էր լինում նրանց անցեալ կեանքի մասին և թէ ինչ ու ինչ պատճառներից են ընկել աղքատութեան մէջ: Երբեմն Նասը բերում էր «ձեռադերին» իր հետ տուն և մխիթարում, կշտացնում ու ճանապարհ դնում:

Ամենքն օրհնում էին Աստծուն, որ իրանց մի այսպիսի փոքրիկ աղայի է պատահացրել:

Գալով բրտի ընտանիքին, որտեղ Նասը բուք ու ցրտին ապաստան էր գտել, և որոնց տանը առաջին անգամը հասկացել էր, թէ սրբան գանազան են մարդկանց կարիքներն ու դրութիւնը, նրանց ուրախութիւնն ու տխրութիւնը՝ այդ ընտանիքին մինչև օրս էլ Նասը յաճախ այցելում է և նրանց թանկագին ու սիրելի հիւրն է:

ԹԻՓԼԻՍԻ ՀՐԱՏՈՑ ՀՐԱՏԱՐԱՆԿՆԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900-ին լոյս են տեսել.

| | Ռ. Գ. |
|--|-------|
| 172 Առակը Լաֆօնթէնի, թարգմ. Մ. Նուպարեանի . . . | 1 — |
| 173 Գնեսիկ, թարգմ. Ա. Մխիթարեանի | 50 — |
| 174 Խղճով դատաստան, թարգմ. | 05 — |
| 175 Հայկական նշանազրեր հարթակարի համար, կազմ. օր. եղ. Պատկանեան | 80 — |
| 176 Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի, ք. տպագր. (պատկերով) | 1 — |
| 177 Սիֆիլիս, կակուղ շանկր և սուսունակ, բժշկ. Վ. Արծ. — | 25 — |
| 178 Մանկական Լոտո, ք. տպագրութիւն | 1 — |
| 179 Մարսիմկա, թարգմ. Ա. Մխիթարեանի | 15 — |
| 180 Թշուառների բարեկամ, փոխ. Վ. Արծրունի | 20 — |
| 181 Իլեանկա, թարգմ. Պ. Հովուեանցի | 10 — |
| 182 Արզար ծերունի, Վ. Հիւզոյի, թարգմ. Ա. Մ. | 15 — |
| 183 Եասի արկածքները, թարգմ. Պ. Պ. | 10 — |

Նուէր ստացուած գրքեր, որոնք վաճառոււմ են Ընկերութեան օգտին:

| | |
|---|------|
| Ազուլեցոյ բարբառը, Ս. Սարգսեանի | 2 — |
| Մեղուներ, Լ. Լանգստրօտի, թարգմ. Զօկ. | 15 — |
| Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը, նորայր Ն. Բիւզանդացի | 1 50 |

Գիտել—Тифлисъ, Тифлисское Общество Изда-
данія Армянскихъ книгъ, կամ Tiflis, (Russie),
Société de la publication des livres arméniens.

Գինն է 10 Կ.



1935

0006421

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0006421

